
ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայագիտությունը ծանր ու անվերադարձ կորուստ ունեցավ: Այլևս մեր կողքին չէ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի խորհրդական Արամ Աշոտի Քալանթարյանը: Ծնվել է 1937 թ. Սուխումի քաղաքում: Բարձրագույն կրթությամբ ստացել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում (1955–1959 թթ.):



Արդեն ասպիրանտական ուսումնառության տարիներին ձևավորվեց նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը, այն է՝ միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրությունն իր բազմակողմ դրսևորում

ներով, իսկ նշանավոր մայրաքաղաք Դվինը դարձավ նրա հնագիտական ուսումնասիրությունների գլխավոր ու հիմնական օբյեկտը, մինչև 1977 թ. լինելով արշավախմբի անդամ, պետի տեղակալ, իսկ այնուհետև, իր ուսուցիչ, մեծահամբավ հնագետ-պատմաբան, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի մահից հետո մինչ այսօր՝ արշավախմբի պետ: Եվ պատահական չէ, որ նրա թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները («Դվինի նյութական մշակույթը 5–8-րդ դդ.» – 1966 թ., «Միջնադարյան Դվին քաղաքը» – 1990 թ.), մի շարք մենագրություններ՝ «Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964–1970 թթ. հաշվետվություն-ուսումնասիրությունը (1976 թ.), «Դվինի վաղմիջնադարյան կնքադրոշմները» (ռուսերեն) մենագրությունը (1982 թ.), Փարիզում ֆրանսերեն լեզվով «Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունը» մատենաշարով լույս տեսած Դվինի պատմությանն ու հնագիտությանը նվիրված «Dvin. Historie et archéologie de la ville médiévale» ստվարածավալ մենագրությունը (1996 թ.), նվիրված են այդ վարչաքաղաքական ու մշակութային կենտրոնի համակողմանի հետազոտությանը:

Չափազանց լայն է Ա. Քալանթարյանի՝ հնագիտական արշավախմբերի մասնակցության ու ղեկավարման աշխարհագրությունը՝ Դվին, Գառնի, Արմավիր, Արտաշատ, Սիսիան, Մարտունի, Վարդենիս, Թումանյան, Սպիտակ, Օշական, Կոթի, Գոգարան և այլուր:

Նշանավոր գիտնականի գրիչը բեղուն էր՝ մոտ 15 մենագրություններ, 150-ից ավելի գիտական հոդվածներ, խմբագրել է բազմաթիվ գրքեր: Նրա քրտնաջան աշխատանքի արդյունք են նաև մի շարք մեծանուն հայագետների (Քաջբերունի, Աշխ. Քալանթար, Կ. Ղաֆադարյան, Ս. Տեր-Ավետիսյան) աշխատությունների ժողովածուների կազմումն ու հրատարակումը:

Ա. Քալանթարյանի մոտ հիսնամյա աշխատանքային գործունեությունը կապված է եղել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Այստեղ է նա անցել կրտսեր գիտաշխատողից մինչև Հայաստանի առաջատար հնագետ-պատմաբանի արգասավոր ուղի: Նա աչքի է ընկել նաև գիտակազմակերպչական մեծ ունակություններով: 1986 թ. Արամ Քալանթարյանը ղեկավարել է ինստիտուտի նորակառույցների հնագիտության բաժինը, որը մեծ աշխատանքներ է տարել Հայաստանի տարբեր շրջաններում՝ հուշարձաններն ավերումից փրկելու և բազմակողմանի գիտական ուսումնասիրություն կատարելու ուղղությամբ: Նրա գործուն մասնակցությամբ հանրապետության նորակառույցներում պայմանագրային եղանակով կազմակերպվել և աշխատել է 40 արշավախումբ:

1993–2006 թթ. Ա. Քալանթարյանը վարել է ինստիտուտի տնօրենի պաշտոնը և իր կազմակերպչական հմուտ ղեկավարման շնորհիվ, հատկապես երկրի համար դժվարին տարիներին, ինստիտուտը կարողացավ պահպանել գիտական ու կադրային-հիմնական ներուժը, նույնիսկ արձանագրեց որոշակի հաջողություններ: Առանձնակի ձեռքբերումներ ինստիտուտն արձանագրեց նրա տնօրինության վերջին տարիներին: Ա. Քալանթարյանը եղել է ինստիտուտի գիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների նախագահ: Անդամ էր նաև մի քանի այլ ինստիտուտների և բուհերի գիտական խորհուրդների, ղեկավարում էր հայագիտության գծով թեմաների փորձագիտական հանձնաժողովի աշխատանքները:

Արամ Քալանթարյանը իր համեստ, շիտակ բնավորության, գիտական անուրանալի վաստակի շնորհիվ ընկերական և գիտական ամենալայն շրջանակներում վայելում էր մեծ հարգանք ու հեղինակություն:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«Հայաստանի Հանրապետություն», 30 մարտի 2010 թ.